



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2909

W 1824

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. Ա.

№ 2.

2002

(34)

հ ւ շ ե ս հ ֆ հ լ ի ս ը

ԱՇԽԱՏԱՄԵՐՈՒԹԻՒՆ

ԲԺ. ԱՐՏ. ԲՈՒԺԱԲԱՐԱ

616.9

F-94

Ս. ՊԵՏԵՐՔՈՂԻՐՁ
և ԱԿՈՐՈՒԴՅԱ ՏՊՐԵՐ

1891.

610
55-ԲՌ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ Գ. Ա.

№ 2.

616.9

Բ-94

ԻՆՉ Ե ՍԻՖԻԼԻՍԸ

«Դեղ անելը բժշկի պարտքն
է, բայց հիւանդութիւնից նա-
խազգուշացնելը՝ նրա բարձ-
րագոյն կոչումը»:

ԱՇԽԱՏԱՄԱՐԵՑ

ԹՖ. ԱՐՏ. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ



Ա. ՊԵՏԵՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՏՊԱՐԱՆ Ի. Ն. ՍԿՈՐՈԽՈԴՈՎԻ
1891.

858
1130 - 4/
28/ 2138
28/ 2138

10090

16454

018
01-23

ՅԱՐԱՋԱԿԱՆ ՀԱՅԻ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 22 марта 1891 года.

Tipografija I. N. Sko-roho-dova (Nadejdin-skaja, 43).

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ԻԲՐԵՒ ՑԱՌԱԶԱԲԱՆ

Երբեք հիւանդութեան մասին խօսել ամօթ չէ, ինչ տեսակ հիւանդութիւն կուզէ լինի: Սիֆիլիսը արեան հիւանդութիւն է և աւելի վնասակար քան թէ խօլերան կամ ժանտախտը, որովհետեւ այդ հիւանդութիւններից հարկաւոր է զգուշանալ մի որոշ ժամանակ, որից յետոյ նրանք անցնում են, իսկ սիֆիլիսից հարկաւոր է զգուշանալ ամէն մի օր, ամէն մի ժամ: Սիֆիլիսը վնասակար է մանաւանդ նրանով, որ գլխաւորապէս ոչնչացնում է մեր երիտասարդ սերունդը, որի վրա լինում է առհասարակ մեր ապագայի յցյլը: Սիֆիլիսի զոհերը մեծանում են աւելի այն ժամա-

*

նակ, ելք մարդիկ չունեն հարկաւոր
գաղափարը զրա մասին, չը գիտեն ինչ-
պէս զգուշանալ նրանից կամ հիւան-
դանալով՝ ինչպէս վարուեն, որ հիւան-
դութիւնը չունենայ զարհուրելի հե-
տեանքներ։ Այս զբքուկի նպաստակնէ
մեր ժողովրդին փոքր ի շատէ հասկա-
ցողութիւն տալ սիմիլիսի մասին, իսկ
մի քանի ժամանակից յետոյ յոյս ու-
նեմ լըս ընծայելու մի աւելի ընդար-
ձակ աշխատութիւն այդ հիւանդու-
թեան մասին։

Ա. Ռուբենյան

10 նոյեմբեր. 1890 թ.

Ս. Պետրոսով

Արելի Գևորգ,

Նեռանալով քեզանից դէպի Կովկաս՝
և քեզ խոստացայ այնտեղից դրել մեր
հայրենիքի առողջապահական դրու-
թեան մասին, որը քեզ այնքան հե-
տաքրքրում է։ Առ այժմ բաւականա-
նում եմ քեզ զրել այն զարհուրելի
հիւանդութեան վրա, որ կոչում է սի-
ֆիյես (աթէշակ, սըխըլմա, քիֆթ)։

Իմ այստեղ եղած ժամանակ եկաւ
ինձ մօտ րժշկուելու մի կին ու ցոյց
տուեց մեծ մատի վրա մի վէրք։ Ես
հարցրի, թէ ի՞նչից է գոյացել այդ վէր-
քը. նա պատմեց թէ նրա տղայ Վրա-
մին ծեծելէ հարեանի տղայ Կարա-
պետը և նա (կինը) գուրս է եկել պաշտ-
պանելու իր որդուն ու քաշելէ Կարա-
պետի ականջը, Կարասլեան էլ սաստիկ

կծել է նրա մատը և աշա երկու շաբաթիցյետոյ սկսել է գոյանալ այդ կոշտ վէրքը: Աշա վէրքի նշանները. վէրքի շուրջը ուռածէ ու պնդացած, միջում կայ փոքր ինչ թարախ. վէրքը շօշափելիս՝ կարծում ես թէ նրա տակը մի ամուր բան կայ, վէրքը ոչ ցաւումէ և ոչ քոր է դալիս: Յետոյ քննելով կինարմատին՝ տեսայ, որ նրա մարմնի վրա կան վեր տուած մուգ-կարմրագուն բծեր առանձին-առանձին, իսկ դլսի վրա մազերի մէջ՝ դեղնագուն մոմի պէս բշտիկներ, որոնց կարելի է եղունգով վերցնել: Խեղճէ կինարմատ, եթէ գիտենար, որ վարակուածէ սիֆիլիտով...

Ես բերել տուի իսկցն փոքրիկ Արապետին, որը կծել էր նրա մատն ու նայելով նրան՝ սարսափեցի: Աիրելի Գէտրդ, Աարապետը համարեա ձայն չունէր, նրա բերանի մէջ շրթունքի վրա կար մի մեծ կոշտ վէրք, յօնքերն ու դլսի համարեա բոլոր մազերը թափած էին, աչքերից հոսում էր թարախ ու կուրծքը ծածկուած էր թարախ բռնած բշտիկներով: Եյսպիսով Աարապետն էլ ունէր

սիֆիլիս ու նա վարակուած պիտի լինէր հարեան երեխաներից խաղալու ժամանակ: Աարապետը վարակել էր իմ ծանօթ կինարմատին, այդ կինարմատը ունէր մի փոքրիկ եօթ ամսական աղջիկ Սաթինիկ անունով, որի շրթունքների, նոյնպէս և մարմնի վրա կային սիֆիլիսի բշտիկները: Խնչքան վատ սովորութիւն է մեր մէջ, որ ծիծ տուող կանայք, բացի իրանց երեխաներից, կերակրում են և ուրիշներին. աշա այս էր պատճառը, որ հարեանի կինը ծիծ տալով Սաթինիկին՝ ինքը վարակուել էր սիֆիլիսով ու յետոյ նոյնպէս վարակել իրա մատղաշ երեխային: Որքան անմեղ զոհեր...

Եցիրո՞՛ օվենակ: Եկաւ ինձ մօտ մի սիրուն, բայց գունաթափ ու նիշար կինարմատ ու յայտնեց որ իրան որդի չէ մնում, թէպէտ ծնել է չորս անգամ, բայց բոլորն էլ օրապակաս՝ չորս-հինգ ամսական վեժուել են մեռած. Հինգերորդ երեխան միայն ծնուել է կինդանի, բայց նա էլ ութ օրից յետոյ մեռնում է. բոլոր երեխաների մարմիններն

Ել ծածկուած են եղել մեծ-մեծ բշտիկ-
ներով ու վէրքերով։ Նա պատմեց, որ
նրա մարդը սովորաբար լինելով՝ գնում
է մեծ քաղաքներից ապրանք բերելու։
Ահա երեկի այդ մեծ քաղաքներումն է
նա սիժիլիս ստացել անառակ կանանց
հետ յարաբերութիւն ունենալով ու վա-
րակել իր սիրուն ու ազնիւ կնոջը ու
հետեւաբար՝ իր ամբողջ սերունդը։

Երբորդ օրնեակ։ Եկաւ ինձ մօտ կըր-
կին մի 25 տարեկան երիտասարդ ու
սաց. և թէ ինձ ըրբժշկես, ես ինքս
ինձ կը սպանեմ։ Պլուխս գիշերները սաս-
տիկ ցաւում է, այնպէս որ չեմ կարո-
ղանում քնել ոտիս ոսկորները այնպէս
սաստիկ են ցաւում, որ ցաւից շատ ան-
գամ լալիս եմ...» Ես քննեցի հիւան-
դին. նրա ձայնը բոլորովին կտրուած
էր, կոկորդում չուներ փոքրիկ լեզուա-
կը, այլ մի մեծ վէրք. նրա հետ խօսե-
լիս՝ բերանից գալիս էր գարշելի հոտ,
որովհետեւ արդէն փտել էին նրա քթի
ոսկորները. նա հազում էր ու նրա մար-
մին ուներ ընդհանուր գեղնութիւն.
վարակուած էին արդէն նրա թռփերը,

Ենարդը, փայծաղն ու աչքերը, որից կա-
րող էր նա մինչև անգամ կուրանալ։
Եյս երիտասարդը վարակուել էր մի
անառակ կնոջից ու ամաչելով, որ ծնող-
ներն ու բարեկամները չիմանան, նա գնա-
ցել է ծածուկ մի մօլլայի մօտ, որ նա
գեղ անէ. մօլլան ի հարկէ համ փո-
ղերն է առել համ էլ խեղճ հիւանդին
այս սարսափելի դրութեան մէջ գցել
այնպէս որ նա ոչինչ բան չի կարողա-
նում անել ոչ մի բանի այլ ևս պէտք
չէ ու ապրում է աշխարհիս վրա իբրև
մի աւելորդ արարտած... Եթէ գնար նա
իր ժամանակին իսկական, հմուտ բժշկի
մօտ և ոչ մօլլաների մօտ, ի հարկէ
նա այսպիսի օրի չէր հասնիլ Պէտք է
առհասարակ զգուշ լինել ըստ վարակուել
ու խելք ունենալ՝ գոնէ վարակուելուց
յետյ մարդավարի բժշկուել։

Եյդ զարհուրելի հիւանդութիւնը
ըստիտէ ոչ հասակ, ոչ գիրք... նրա-
նով կարող է վարակուել թէ՛ հա-
րուստ, թէ՛ աղքատ, թէ՛ ծերունի, թէ՛
նորածին մանուկ, թէ մինչև անգամ
դեռ մօր արդանդում եղած երեխան.

Նրանով կարող են վարակուել ոչ թէ
միայն անբարցյականները, այլ և բոլո-
րովին բարցյական մարդիկ՝ զլսաւորա-
պէս անզգուշութիւնից, օրինակ ծա-
ղեկ կարող դանակից (եթէ նա մաքուր
չէ), համբուրից, ծխախոտից, մի բաժա-
կով ջուր կամ զինի խմելուց, մի ա-
մանով կերակուր ուտելուց և այլն:
Սիֆիլիսը սկզբում երեսումէ այնտեղ,
որին ուղղակի կպել է վարակիչ թշնն
ու ապա տարածւումէ ամբողջ մարմի
մէջ:

Մարդկութեան այդ զարհուրելի ցե-
ցը—սիֆիլիսը մտնումէ մեր քաղաք-
ները, գիւղերը... “Նա, բացի նրանից որ
բազմապատճումէ զոհերը իր վարակու-
մով, ամբողջ սերունդներ դարձնում
է անընդունակ ամէն բանի: Ո՞րքան տան-
ջանքներ է կրում սիֆիլիսոտ հիւան-
դը. ամէնահարուստն անգամ այնքան
է իրան կորցնսւմ, որ օրական հացի
կարօտ կարող է մնալ ուղղքան կան սիֆի-
լիսոտ աղքատներ գոնէ գուռ թրե-
եկող: Ո՞ուսաստանում միայն հարիւրից
հինգ-վեց մարդ համարեա հիւանդ է

սիֆիլիսով, ուրեմն մօտ եօթը միլիօն
ժողովուրս. այդքան հոգի կարող էին
մի ամբողջ պետութիւն կազմել...

Սիֆիլիս ստացող հիւանդը չը պիտի
թագցնէ հիւանդութիւնը կամ պահէ,
ամաչի բժշկի դիմելու, որովհետև եթէ
նա սաստկացաւ, այլ ևս դժուար է լի-
նում նրա բժշկելը: Հիւանդը չը պիտի
ամաչի, որովհետև, ինչպէս ասացի, ան-
բարցյական կեանքը չէ միայն հիւան-
դութեան պատճառը. տեսնում ես մի
երեխայ կամ ընկերիդ ըստ առողջ, համ-
բուրում ես նրան, ուտում ես նրա հետ
միենոյն գդալով, խմում եմ ես միենոյն
բաժակով, ի՞նչ գիտես թէ նրա բերա-
նը լիքն է սիֆիլիսի բշափկներով թէ
նա հիւանդ է, մինչև անգամ նա ինքը
կարող է չը գիտենալ և ահա ստացար
սիֆիլիսը:

Սիֆիլիս կարելի է ստանալ և ա-
նուղղակի կերպով, օրինակ դալսաքը
հանումէ սիֆիլիսոտ հիւանդի ատա-
մը, յետոյ գալիս է նոյն գազով քո ա-
տամը հանում ու գու սիֆիլիս կարող
ես ստանալ. կտրում են քո երեխայի

ծաղեկը, բայց ծաղկի հիւթը վերցրած
է մի ուրիշ հիւանդ երեխայից ու քո
անմեղ մանուկը կարող է սրբիլիս ստա-
նալ Աեր մէջ քանիսն են թագյնում
հիւանդութիւնը ոչ թէ միայն իրանց
ծնողներից ու բարեկամներից, այլ և մին-
չե անդամ բժշկից ու պատճառ են դառ-
նում այդ անխիղձ մարդիկը ուրիշ
անմեղների վարակուելուն... Ի՞այց մի
ուրիշ պատճառ էլ կայ, որ հիւանդը
չէ դիմում բժշկին, այդ այն է որ սր-
բիլիսի վերքերը բշտիկները չեն ցա-
ւում հիւանդն այսպիսով սկզբում ու-
շագրութիւն չէ դարձնում, այն ինչ
նրա ամբողջ մարմինը վարակուած է,
իսկ թէ ինչ է յինում որա հետեանքը՝
ես կասեմ փոքր ինչ յետոյ:

Սրբիլիսն երբէք ինքն իրան չէ դոյա-
նում ու ոչ էլ ինքն իրան կանցնի, նա
ունի մի քանի աստիճաններ:

Առաջին աստիճանն այն է, երբ մարմի-
նի մի որեւէ մասի վրա դուրս է դալիս
մէկ, շատ հազեւ՝ երկու վերք, որի շուրջ
ուսած ու պինդ է լինում այդ վերքը
դժբաղդաբար չէ ցաւում ու միմբում:

Մի քանի ժամանակից յետոյ ուռչում
են վերքի մօտակայ խուլերը, օրինակ՝
եթէ վերքը մատի վրա է ուռչում են
արմունկի կամ կոնատակի խուլերը, ե-
թէ նա սեռական անդամի վրա է ուռ-
չում են ածուկների խուլերը: Այս ու-
ռած խուլերը նշնպէս չեն ցաւում: Մի
քանի շաբաթից յետոյ հիւանդի գցնը
թռչում է, նրան դողացնում է, տաքաց-
նում հիւանդը իրան թոյլ է զգում,—նա
արդէն բոլորովին վարակուած է:

Նրկրորդ աստիճանի ժամանակ մարմը-
նի վրա գուրս են գալիս կարմրաւուն բծեր,
բշտիկներ, հիւանդի ձայնը կտրւում է,
մազերը թափւում են, երբեմնապէս կա-
րող է և փորը ցաւել ուտել ու խմել
դժուարանում է, որովհետեւ բերանի ու
կոկորդի մէջ կան սպիտագուն վերքեր
համարեա արծաթէ հինգ կոպէկանոցի
նման: այդ տեսակ վերքեր լինում են
և նրայետանցքում: Այս բոլոր երեսյթ-
ները դարձեալ կարող են անցնել եթէ
հիւանդը կանոնաւոր բժշկուել սկսի, հա-
կառակ գէպքում՝ բշտիկները դարձեալ
երեսում են ու հիւանդութիւնն աւելի

ու աւելի սաստկանում է... ՚Քանի՛ ան
են զոհ գնում սիֆիլիսին՝ ծածկելով
հիւանդութիւնը կամ դիմելով մօլա-
ներին, դալաքներին ու «հերիմ-պա-
ռաներին» և ոչ իսկական հմուտ բժշ-
կին, որը կարող էր այդ դեպքում միշտ
օգուտ բերել շատ քիչ բացառութիւնով,
օրինակ՝ եթէ հիւանդի քիմք փառել է
կամ բոլորովին ընկել սիֆիլիսից, բժիշկը
խօ չի կարող նոր քիթ ստեղծել:

Նրբ սիֆիլիսի երրորդ աստիճանն
սկսում է, այն ժամանակ կաշուի մէջ
ու կաշուի տակ գուրս են գալիս ուռուցք-
ներ, որոնք կարող են հասնել մինչև
ոսկորները. նրանք չեն ցաւում ու կա-
մաց-կամաց սկսում են փափկիր յետոյ
կարմրելով՝ բացում են ու դառնում են
վերքեր, որոնք երկար ժամանակ չեն
լաւանում: Եյդ ուռուցքները կարող
են պատահել ոսկորների վրա և ու-
ղեղի մէջ ու կարող են շատ մեծանալ:
Պէտք է տեսնել գիշերները հիւանդի
տանջանքները, երբ նրա գլուխն ու ոս-
կորները ցաւում են... շատ անգամ
հիւանդի ոսկորներից մի կտոր փառում

է ու ընկնում... ցաւում են սաստիկ
նրա մկանունքներն ու հիւանդն իրան
հաւատացնում է թէ ոսկրաքամի (բե-
մատիզմ) ունի: Ծատ անգամ հիւան-
դի թոքերից արիւն է հոսում, նա այր-
ւում է տաքութեան մէջ ու վերջա-
պէս մեռնում:

Սիրելի Պէտրով, սիֆիլիսը մի լաւ
յատկութիւն ունի, այդ այն է, որ նրան
մի քանի բացառութիւնով առհասարակ
կարելի է բժշկել թէպէտ դրա համար
հարկաւոր է ունենալ մեծ համբերու-
թիւն ու խստիւ պէտք է կատարել
բժշկի պատուերները: Ի՞այց կրկնում
եմ՝ պէտք է ամէն կերպ աշխատել չը
վարակուելու, որովհետեւ թէպէտ դեղ
անելը բժշկի պարտքն է, բայց հիւան-
դութիւնից նախազգուշացնելը նրա
բարձրագոյն կոչումը: Սիֆիլիսի մա-
սին պէտք է խօսել բաց, առանց քա-
շուելու, որպէս զի ամէն մարդ գիտե-
նայ, որովհետեւ սիֆիլիսի տարածուելն
ու զարգանալը մեծ կապ ունի բա-
րյականութեան հետ,—որտեղբարյա-
կանութիւնն ընկնում է, այնտեղ քանի

գնում տարածւումէ սիֆիլիսը,—այս պատճառով կրկնում եմ՝ ամէն մարդ հասկացողութիւն պիտի ունենայ սիֆիլիսի մասին։ Ահա մի օրինակ. մէկ ուսումնարանի 12 տարեկան աշակերտ սովորութիւն ուներ հաւաքել փողոցներում կիսով չափ ծխուած ծխախոտներ ու ծնողներից ծածուկ ծխել նա վարակումէ սիֆիլիսով այդ ծխախոտների մէկից, իսկ այդ հիւանդից վարակում են նոյն ուսումնարանի հօթն աշակերտներ, գլխաւորապէս բան ուզելով ու բերանն առնելով հիւանդ երեխայի մատիսը կամ նրա կծած ինձորը, հացը... Թողլ լաւ իմանան այս օրինակը մեր վարժուհիներն ու վարժապետները,—ամենայն աշակերտ պէտք է ունենայ իր մատիսն և այլն։

Ի՞նչ օգուտ, եթէ զիտենաս, սիրելի Գէորգ, որ սիֆիլիսը բժշկումէն սնդիկով (սուլեմա, սուլէյման), խօփով մուխ տալով*) կամ զանազան գէկօքտներ

*) «Ոռւխ տալը» կամ «բուղ տալը» համարեա թողած է բժշկականութեան մէջ։

խմացնելով։ Դեռ Աստուած մի արասցէ, որ դու հիւանդանաս, բայց մի՛թէ հիւանդանալով պիտի սկսես ինքդ քեզ բժը կել կամ գիմես զանազան մօլաներին ու «Հերիմ-պառաւներին», չէ՞ որ եթէ կացինդ կոտրումէ փինաշուն չես տայիս, որ նա նորոգէ, այլ գարբնին,— սիֆիլիս ունեցողին էլ կարող է բժշկել միայն իսկական բժիշկը։ Կատ անգամ մեզ մօտ ասում են՝ «Եթէ Աստուած կամենայ, հիւանդը կը լաւանայ», կամ եթէ հիւանդը մեռաւ, ասում են՝ «Աստուածու կամքն էր... Զէ՞ որ Աստուած մեզ խելք է տուել որ մեր լաւն ու վատը մենք հասկանանք, որ կարողանանք մեզ կառավարել, եթէ ամէն բան Աստծու վրա զցենք, էլ ինչո՞ւ էր նա մեզ բանական մարդիկ ստեղծում եւ ոչ անբան անսասուններ։ Զէ՞ որ եթէ քո հրացանը կոտրում է, գու դիմում ես հրացանազործին նորոգել տալու. հակառակ գէպքում ի՞նչպէս պիտի պաշտպանես քեզ քո թշնամուց. չէ՞ որ նա կարող է քեզ սպանել կամ զերին վայրէ նել իւլիլքեղանից քո բոլոր ստացուածքը 7/31 1922

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՆՐԱՅԻՆ ԱՆԴՐԱՑՈՒՅՑ ԲՈՒԺՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՆՐԱՅԻՆ ԱՆԴՐԱՑՈՒՅՑ ԲՈՒԺՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՆՐԱՅԻՆ ԱՆԴՐԱՑՈՒՅՑ ԲՈՒԺՈՒՅՑ

կարող է նա քեզ ստիպել մռուանալ քո
ընտանեկան սրբութիւնը, ազգութիւնն
ու մինչեւ անդամ քո Աստուածը...

Աստուած մարդուն զէնք է տուել
մաքառելու իր մարմնի թշնամու՝
հիւանդութեան դէմ, այդ զէնքն է մար-
դու խելքն ու բժշկի խորհուրդները:
Պէտք է մարդը լսւ հասկանայ իր
խելքով, որ հիւանդութեան համար
բժիշկ կայ և ոչ մօլլաներ ու հեքիմքաւ-
թարներ, որոնք ոչ թէ բժշկում, այլ ի-
րանց տգիտութիւնով աւելի սաստ-
կացնում ու բարգացնում ին հիւանդու-
թիւնը:

Պէտք է մաքառել սիֆիլիսի դէմ ու
դրա համար հարկաւոր է նրա մասին
խօսել բաց, արձակ, ամէն տեղ պէտք
է մարդիկ ճանաչեն իրանց այդ զար-
հուրելի թշնամուն, որպէս զե կարո-
ղանան նրա դէմ կուել:

Ահա սիֆիլիսի դէմ նախազգուշաց-
նող մի քանի կանոններ:

1) Անառակ կանանցից հե-
ռու մնալ, որովհետեւ սրանցից

համարեա կէսը վարակուած էն սիֆի-
լիսով:

2) Կասկածաւոր կնոջ հետ
մեր ձաւորութիւնից յետոյ իս-
կոյն սեռական անդամը հար-
կաւոր է լաւ լուանալ շըաջը-
րով*) կամ երկտոկոս կարբօլ-
կայով**). Իսյց նախազգուշացնում
եմ, որ այս գեղերի վրա շատ չըպէտք
է յուսալ ամէն մարդ հարկաւոր է, որ
մաքուր պահէ իրան մինչեւ ամուսնու-
թիւնն ու ժամանակին ամուսնանայ:
Զարմանալի է, ի՞նչ իրաւունքով տղա-
մարդը պահանջում է որ իր նշանացուն
անմեղ, սուրբ և մաքուր լինի, քանի
որ ինքը ոչ թէ միայն մաքուր, այլ
մինչեւ ոսկորները փչացած, ուժից քա-

*) Շբաջուրը կարող է ամէն մարդ ին-
քը պատրաստել, հարկաւոր է վերցնել մէկ
ու կէս թէյի գրալ շիբ (պաղլեղ) և
խառնել մի թէյի բաժակ չըի հետ:

**) Двухпроцентный раствор карболовой
кислоты, ор կարելի է սոսանալ ամէն մի գե-
ղատնում:

մուած է լինում իր անբարոյական
կեանքից:

3) Ամենայն մայր ինքը պար-
տաւոր է ծիծ տալ երեսային,
բայց եթէ ինչինչ պատճառներից ստի-
պուած (օրինակ՝ թոքախտ) նա չէ
կարող այդ անել այն ժամանակ նա
պիտի ընդունակ առաջայց, որի առող-
ջութիւնը նախօրօք պիտի քննէ բժիշ-
կը որովհետեւ շատ յաճախ են պատա-
հում սիֆիլիսոտ ծծմայրներ, որոնք
վարակում են մեր երեխաններին: Վայ-
րը առհասարակ չըպիտի թոյլ տայց, որ
իր զաւակին ծիծ տան զանազան օտար,
հարեան ու մինչև անզամ մօտիկ ծա-
նօթ կանայք:

4) Ազաւիններն ու խոհա-
րարները կարող են շատ ան-
գամ սիֆիլիս տարածել: Ահա
մի օրինակ, մի համեստ ու ազնիւ-
տիկին գնումէ խոհարանն ու առ-
նելով աղախնու ձեռքից դգալը՝ տես-
նումէ սպասի համը, աղախնու այտը
(թուշը) այդ ժամանակ կապած է լի-
նում, որի պատճառը նրա ասելով իբր

թէ ատամի ցաւնէ լինում: Երեք շա-
բաթից յետոյ տիկնոջ շըթունքի վրա
երեւում է կոշտ վէրքը, իսկ եօթը շա-
բաթից յետոյ նրա ամբողջ մարմնի վը-
րա գուրս են գալիս սիֆիլիսի բշտիկ-
ները: Իժիշկը գալիսէ, քննում աղախ-
նին ու տեսնումէ, որ նա սիֆիլիս ու-
նի, որից և վարակուել էր նրա տանտի-
կինը:

5) Շատ անգամ դալլաքնե-
րը ատամ հանելու, կոտոշ
կպցնելու, կամ ածիլելու ժա-
մանակ վարակում են մարդ-
կանց իրանց անմաքուր գոր-
ծիքներով: Ահա մի օրինակ. մի պա-
րոն գնումէ դալլաքի մօտ մօրուքը ա-
ծիլելու, գալլաքն անզգուշութիւնով ա-
ծիլելով չանկոել էր նրա այտից (թշեց)
փոքր ինչ վերեր. որոշ ժամանակից
յետոյ այդ տեղում երեաց կոշտ վէր-
քը որը հետզհետէ այնքան մեծացաւ,
որ անցաւ աչքը, որից և կուրացաւ
այդ պարոնը: Ի հարկէ գալլաքը այդ
պարոնից առաջ ածիլել էր ուրիշ սի-
ֆիլիսոտի մօրուքը. սիֆիլիսի թշն

անցելէր ածելիի վրա, որից և այս
թշուառ պարոնին։ Այս պատճառով
հարկաւոր է որ դալաքը գործիքները
գործածելուց առաջ լաւ լուանայ թունդ
սպիրտով։

6) ՞Օ աղկի հիւթը կարելի է
առնել միայն առողջ հորթից
և ոչ երեխայից, որովհետեւ այդ երե-
խան կարող է հիւանդ լիներ որից և
կը վարակուի պատուաստուողը։

7) Սիֆիլիսով վարակուածը
պէտք է զգուշ մնայ, որ ուրի-
շին չը վարակէ. ով խղճմտանք չունի,
նա մարդ չէ. նա պիտի իր գործածելու
իրերը—շորերը, կերակրի ամաններն և
այլն բոլորովին առանձին ունենայ։


8) Եթէ մէկը երբեից է վա-
րակուած է եղել սիֆիլիսով,
նա երբէք չըպիտի գործած է
ոգելից և միչքներ, այսինքն գինի,
դարեջուր, օղի և այլն. կարելի է գոր-
ծածել միայն այն ժամանակ, երբ բժշկը
թոյլ կը տայ։

9) Սիֆիլիսով վարակուածը
կարող է առողջանալ, եթէ կա-

նոնաւոր բժշկուի իսկական
բժշկի մօտ, բայց եթէ նա ընկաւ
մօլաների, Փէլիքների ու հեքիմ-պա-
ռաւների ձանկը, որոնք խմացնում են
դանազան դէկօքտներ, մուխ են տալիս,
կամ հաբեր ուտեցնում, հիւանդութիւ-
նը երբեմնապէս թէպէտ կարող է դրսից
անցնել բայց ներսից միշտ կարող է
մնալ որով մի քանի տարուց յետոյ
հիւանդի քիթը կարող է ընկներ, նա
կարող է կամ անդամալուծ դառնալ կամ
խելագարուել։

10) Սիֆիլիսով վարակուողը
իրաւունք ունի պսակուելու
միայն հինգ տարի կանոնաւոր
բժշկուելուց յետոյ։

ՎԵՐՋ



2909

ՆԱՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ.

1) Ըստածին օգտակար միջոցներ յանկարձակի հիւանդութեան և փորձանքի ժամանակ. Ա. Պետերբուրգ. 1891. զինը

5 կոպ. (սպառուած է):

2) Միքանի խօսք վարսակիչ հիւանդութիւնների մասին. Ա. Պետերբուրգ. 1891. զինը 5 կ. (սպառուած է):

Գինը քինգ կօգիկ է:

2013



